

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

27 օգոստոսի 2022թ.
ք. Երևան

N 66-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 139-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 22-ի «Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեաթերթիկների ձևերը սահմանելու մասին» թիվ 139-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում)՝

1) 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ ենթակետով.

«5) ընտրություններին մեկ կուսակցություն կամ կուսակցությունների դաշինք մասնակցելու դեպքում դեմ քվեարկությամբ քվեաթերթիկի ձևը՝ համաձայն թիվ 6 հավելվածի:»,

2) N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ թիվ 6 հավելվածով՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

S. Մուկուչյան

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2022թ. օգոստոսի 27-ի N 66-Ն որոշման

«Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2016թ. նոյեմբերի 22 ի N 139-Ն որոշման

↓ լրասանցք ↑
← ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի համարին համապատասխան նշում սև գույնով →
(ծանուցում քվեարկելու կարգի մասին)
(նշվում է ընտրություններին մասնակցող կուսակցությանը, կուսակցությունների դաշինքին տրված համարը)
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (նշվում է ընտրության անվանումը) ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(նշվում է քվեարկության օրը, ամիսը, տարին)
ՔՎԵԱՐԿԵՐՈՒԿ (նշվում է ընտրություններին մասնակցող կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը)
(նշվում է ընտրություններին մասնակցող կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի առաջին երեք թեկնածուների ազգանունները, անունները և հայրանունները)
↓ լրասանցք ↑

»:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2022թ. օգոստոսի 27-ի N 66-Ն որոշման

«Հավելված N 6
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2016թ. նոյեմբերի 22 ի N 139-Ն որոշման

↓
լուսանկար
↑

Նշում սև գույնով, որ ակնհայտորեն տարբերվի
կողմ քվեաթերթիկից
(ծանուցում քվեարկության կարգի մասին)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
(նշվում է ընտրության անվանումը) **ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

(նշվում է քվեարկության օրը, ամիսը, տարին)

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

ԴԵՄ ԵՄ

↓
լուսանկար
↑

»: